

ԳԻՐԱԿՐԱՍՈՒԹՅՈՒՆ

ԱՄՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՈՉ

Խորհրդածելով պապության քառուղիներում անհամար կորուստներ տված ու տառապած երկու ժողովուրդների՝ հայերի ու հրեաների ճակատագրերի, մասնավորապես նրանց հանդեպ թուրքական ազգայնամոլների եւ գերմանական նացիզմի կողմից իրագործված անմարդկային ցեղասպանությունների շուրջ, ակամա մտածում ես, թե աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ հենց նրանք պիտի առաջին հերթին համագային ու ցավակցեին միմյանց, ընդունեին միմյանց վիշտը եւ հասկանային իրար... Այնինչ, Հայոց ցեղասպանությունից, ահա, շուրջ 100 տարի հետո հրեաները պաշտոնապես, կառավարական մակարդակով չեն ընդունել, չեն ճանաչել այն, ինչպես որ շարունակում է ընդդունել ու չճանաչել իր նախնիների գործած չարաղետ եղեռնագործությունն ինքը՝ թուրքական կառավարությունը:

Պատճառներից մեկը, հասկանալի է, թուրքական նույն կառավարության հակազդեցությունն է, ճնշումը կամ սիրաշահումը, որ իրագործվում է աշխարհով մեկ, իսկ մյուս պատճառը, այո, դժվար հասկանալի է, տարօրինակ. որ, իբր, ընդունելով որեւէ այլ ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանություն, դրանով իրենք՝ հրեաները, ստվեր նետած կլինեն իրենց մեծ, անօրինակ ցեղասպանության՝ ՀՈՒՆՔՈՍՏԻ վրա: Չէ, իրենցն ուրիշ է, իրենցն ահռելի՝ է, միակն է... Իրենց Հոլոքոստի կողքին չի կարելի այլ հոլոքոստներ ընդունել. այլեւս չենք ասում՝ համեմատել... Բայց ո՛չ մեկի մտքով չի անցնում իր ցավը համեմատել մեկ ուրիշի ցավի հետ (անկախ՝ մեծությունից կամ փոքրությունից, իրագործման ձեւից ու եղանակներից. սրո՛վ են սպանել, թե՛ այրել են վառարաններում...):

Եւ, ահա, այս մթնոլորտում հանկարծ իմանում ենք, որ հրեա մի գիտնական, Իսրայելի Բաց համալսարանի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ Յաիր Աուրոնը, որ պատմություն եւ ընկերաբանություն է ուսանել Թեյ Ավիվի եւ Երուսաղեմի Հրեական համալսարաններում, նաեւ՝ Փարիզի Սորբոնի համալսարանում, որտեղ ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան, պատմաբանների եւ ցեղասպանագետների միջազգային մի շարք կազմակերպությունների անդամ է, բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ,

դեռեւս 2000 թ. գրել է նաեւ իր տեսակի մեջ եզակի մի մեծ հետազոտություն՝ «Անընդունելի անտարբերություն» խորագրով¹, որի մեջ հիմնականում բարձրաձայնում է այն հարցը, թե ինչի՞ց է, որ դառն ճակատագրով այդքան նման լինելով հայ ժողովրդին, իր ազգակիցները (բացառությունները չհաշված) եւ իրենց երկիրն ընդհանրապէս, այդքան ժամանակ ցուցաբերել են անընդունելի անտարբերություն եւ չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ իրենց ցավակցությունը չեն հայտնել այդ առթիվ: «Մենք,- գրում է նա,- բարոյական պարտավորություն ունենք բոլոր նրանց առջեւ, ովքեր մասսայական ոչնչացման են ենթարկվել»: Շարունակելով իր դատողությունը՝ Յաիր Աուրոնը գրում է. «Չճանաչելով, չըննարկելով այլ ազգերի ցեղասպանությունը, մենք նվաստացնում ենք նաեւ Հոլոքոստը... Մենք պարտավոր ենք հարգելու նաեւ այլ ժողովուրդների հիշողությունը»:

«Ներածական խոսք»-ում իր գնահատանքն ու ուրախությունն արտահայտելով այս գրքի ստեղծման եւ հայերեն թարգմանվելու առիթով, Զորի Բալայանն ընգծում է. «Ինձ համար ամենակարեւորը, եթե չասենք՝ ամենաարամաբանականն այն է, որ Աուրոնը չի կենտրոնանում միայն 1915 թվականի վրա, այլ՝ պատմությանը քաջատեղյակ՝ գրքի առաջին իսկ էջում գրում է. «Հայերի նկատմամբ հաշվեհարդարներն սկսվեցին ԺԹ. դարի վերջին տասնամյակներին եւ բարձրակետին հասան Ի. դարի սկզբին»: Այսինքն, ավելացնում է Զ. Բալայանը, ինչպէս մենք՝ հայերս ենք արդեն շատ տարիներ պահանջում մեր խորհրդարանից՝ ուղղում մտցնել 1988 թվականի նոյեմբերի 22-ին ընդունված «Հայոց ցեղասպանության մասին» օրենքի մեջ՝ ընդամենը 1915 թվականի փոխարեն նշելով 1893-1923 թվականները»:

Քանի որ խոսք եղավ այս գրքի հայերեն թարգմանության մասին, հիշեցնենք, որ դա հնարավոր դարձավ շնորհիվ հայտնի գործարար ու բարեգործ Կարեն Բաղդասարովի:

Պետք է նկատել, որ դժվար կառուցվածքով հետազոտություն է՝ բազմաթիվ ճյուղավորումներով եւ երակներով, որ հեշտ չէ կողք կողքի դնել եւ ընդհանուր ասելիքը մեկտեղելով, շարադրանքը առաջ մղել մի հունով: Եւ ճյուղավորումներից ամեն մեկն իր հերթին լեցուն է կարեւոր, հավաստի վկայություններով ու եզրակացություններով, որոնք բոլորն էլ ուզում ես մեջբերել գրքին նվիրված գրախոսականում, մի բան, որ անհնարին է: Եւ եթե մեզ դժվարին է թվում այդ փոքրիկ խնդիրը, ապա ինչքան դժվարին է եղել հեղինակի՝ տարիների փնտրտուքը, հազար-հազարավոր փաստերի ու փաստաթղթերի ուսումնասիրությունն ու համադրումը: Կարելի է ասել՝ եղել է ուղղակի դժոխային աշխատանք:

Անդրադառնալով նաեւ այդ հարցին՝ Զորի Բալայանն ասում է. «Ես այս

¹ Յաիր Աուրոն, Միոնիզմը եւ հայ ցեղասպանությունը. Անընդունելի անտարբերություն, ռուսերենից թարգմ. Աննա Սաֆարյան, «Ջանգալ-97», 2013, 582 էջ:

մասին խոսեցի իմ բարեկամ Կարեն Բաղդասարովի հետ, թե՛ քեզ չի՞ զարմացնում, որ նա ձեռք է մեկնել նման ծանր աշխատանքի:

- Չի զարմացնում,- վստահությամբ ասաց Կարենը,- պարզապես այդ մարդը շատ է սիրում իր ժողովրդին»:

Իսկ իր ժողովրդին այդքան շատ սիրող մարդը՝ Յաիր Աուրոնը, ընդհանրացնելով իր հետազոտությունը, նշում է, որ իր գրքում մանրագնին հետազոտվում է հրեական ոչ մեծ համայնքի (իշուվ) եւ ամբողջությամբ վերցրած սիոնիստական շարժման վերաբերմունքը հայ ժողովրդի եւ այն չարագործության նկատմամբ, որ կրեցին հայերը թուրքերից...

Այն չարագործության, որ այն օրերին ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիայում՝ Հենրի Մորգենթաու Ավագը, համարել է ժամանակակից պատմության ծանրագույն հանցագործությունը, ինչպես ինքն է գրել. «Մեր ժամանակների ամենասեւ էջերի մեջ դա ամենասեւն է»: Եւ ինքը՝ Մորգենթաուն, այն քերից մեկն էր, որ փորձում էր հնարավորությունների չափով, օգնություն ցուցաբերել հայերին եւ մեղմել աղետի հետեւանքները: Իսկ ԱՄՆ-ը, կառավարական մակարդակով, ստիպված էր չեզոքություն պահպանել մինչեւ 1917թ. ապրիլը:

Շատ բան կարող էր անել Թուրքիայի հզոր դաշնակիցը՝ Գերմանիան՝ հաշվեհարդարը դադարեցնելու համար, սակայն, ո՛չ միայն ոչինչ չարեց այդ ուղղությամբ, այլեւ, ինչպես կարծում են հետազոտողները, անուղղակի մասնակցություն բերեց Հայոց ցեղասպանությանը: Մյուս մեծ տերություններն էլ չմիջամտեցին: Իսկ ինչ վերաբերում է Պաղեստինի հրեական համայնքի եւ սիոնիստական շարժման առաջնորդների մեծ մասին, ասվում է, թե նրանք թուրքամետ ու գերմանամետ էին եւ հավատում էին, թե սիոնիստական շարժման ճակատագիրը եւ պաղեստինյան հրեաների համայնքի ապագան կապված են Օսմանյան կայսրության եւ Գերմանիայի ճակատագրի հետ: Եւ Աուրոնին անկեղծորեն զարմացրել է այն, որ հրեական իշուվն իրեն պահել է այնպես, կարծես հայկական իրադարձություններն իրենց հետ ոչ մի կապ չունեին: Նրանց նամակներում, գրագրություններում, օրագրերում չի գտնվել վրդովմունքի, հուզմունքի, էլ չենք ասում՝ կարեկցանքի ոչ մի վկայություն: Միակ բանը, որ անհանգստացրել է նրանց, այն է եղել, որ ոչ մի նման բան հանկարծ չպատահի իրենց հետ:

Ի հակադրություն այդ բոլորի, հայերի հանդեպ բացահայտ համակրանք են արտահայտել միայն «Նիլ» փոքրիկ ընդհատակյա կազմակերպության անդամները, սիոնիզմի շարժման լոնդոնյան ղեկավարությունը (Խայիմ Վայցման եւ Նաում Մոկոլով, որ 1917-1920թթ. սերտ կապերի մեջ են եղել հայ ներկայացուցիչների հետ եւ դատապարտել են թուրքական իշխանությունների գազանությունները): Պահպանվել են նաեւ առանձին գրողների, հրապարակախոսների, ժուռնալիստների (Իտամար Բեն Ավին, Բեռնար Լազար,

Յասկով Ռաբինովիչ, Ահարոն Ռեպենին) եւ ուրիշների սրտացավ ելույթները, հայերին գորակցելու կոչերն ու ցավակցությունները:

Գրքում մեծ տեղ է հատկացված Փարիզում եւ Լոնդոնում սիոնիստների եւ հայերի միջեւ հիմնական կապող օղակ հանդիսացած բրիտանական դիվանագետ Մարկ Սայքսի գործունեությանը (որը, ցավոք, շուտ է մահացել), նրա պատկերացումներին՝ Մերձավոր Արեւելքի հետպատերազմյան կարգավիճակի ու դասավորության վերաբերյալ՝ հիմնված հրեա-արաբա-հայկական միության ստեղծման հետ՝ բրիտանական կայսրության հովանու ներքո:

Բայց մենք շտապեցինք՝ անդրադառնալով այդ ամենին, որ ավելի շուտ առնչվում են 1915 թվականի եւ հետագա ոճրագործություններին:

Գիրքն սկսվում է հայ ժողովրդի բազմադարյա պատմության համառոտ ուրվագծումով, գալիս-հասնում Ի. դարի երկրորդ կեսին, երբ սրվում են հարաբերությունները քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի եւ մահմեդական թուրքերի ու քրդերի միջեւ եւ ժամանակ առ ժամանակ բանը հասնում է սուր ընդհարումների:

Այդ համապատկերի վրա 1870 թ. Բուլղարիայի եւ Սերբիայի ձեռք բերած անկախությունը չէր կարող հույսով չցնել նաեւ հայերի սրտերը: Եւ, ի պատասխան այդ նկրտումների, սուլթանական իշխանությունն ավելի ու ավելի էր մեծացնում ճնշումները: Հայերն էլ, ի հակադրություն այդ ճնշումների, ուզում էին մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել իրենց իրավագուրկ վիճակի վրա: Նման մի փորձ էլ կատարվեց 1896թ. օգոստոսի 26-ին. հայերի զինված մի խումբ գրավեց Կոստանդնուպոլիսի Օտտոմանյան բանկի շենքը եւ սպառնաց, թե բանկը կայայթեցնի, եթե իշխանությունները հայերի հետ չվարվեն որպես կայսրության օրինական քաղաքացիների:

Մինչ այդ, դեռ նախորդ թվերից, արդեն այս ու այնտեղ տեղի ունեցող հայերի պարբերական ջարդերին գումարվեցին նոր, առավել ընդգրկուն հաշվեհարդարներ անմեղ հայ բնակչության շրջանում, որպես պատիժ իրենց հայրենակիցների չափը չճանաչող համարձակության համար, որ զինված հարձակում են գործել նման մի հաստատության վրա եւ դեռ պահանջներ են ներկայացնում: Հետազոտողների կարծիքով, 1894-96 թ.թ. ընդհանուր առմամբ զոհերի թիվը հասավ մոտ 200 հազարի: Դա չէր կարող իր արձագանքը չգտնել նաեւ այլ երկրներում, մանավանդ, որ Օտտոմանյան բանկում իրենց հաշիվներն ունեին մեծ տերությունները: Եւ նրանց պահանջով այս անգամ հաշվեհարդարը դադարեցվեց, ու սուլթանը ստիպված եղավ հայտնելու համարներում:

Դա ժամանակավոր բան էր, իհնչ խոսք, եւ անհնարին էր, որ «Կարմիր» անվանված սուլթանն ու իր վարչակարգը հեշտ ու հանգիստ փոխեին իրենց բնույթը:

Սակայն, որքան էլ դաժանորեն շարունակեին իրենց արյունոտ ճանա-

պարհը, նկատելի էր, որ Օսմանյան կայսրությունը թուլանում է, քիչ առ քիչ սեղմվում Փոքր Ասիայի սահմաններում: Եւ այդ ժամանակներում է, որ զարգանում է պանթուրքիզմի՝ Արեւելքի բոլոր թուրքալեզու ժողովուրդներին միավորելու եւ Կենտրոնական Ասիայում տարածվելու գաղափարը: Ահա նաեւ ինչու հայությունը դարձավ այդ ծրագրի ջատագովների աչքի փուշը: Ժամանակն անցնում էր, սուլթանին փոխարինելու եկան այսպես կոչված երիտթուրքերը, շատերը (այդ թվում եւ հայերը) մտածեցին, թե Արյունոտ Սուլթանից հետո հնարավոր կլինի ազատ շունչ քաշել, սակայն, հաջորդող իրադարձությունները լավատեսության ոչ մի հույս չէին թողնում. առավելեւս՝ Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո, երբ ռազմաճակատներում կրած պարտությունների համար թուրքերին քափության նոխազ էր պետք, դա համարվեց հայությունը: Մասնավորապես ռուսական զենքի հաջողությունը կապվեց հայերի «դավաճանության» հետ, եւ դա առիթ հանդիսացավ հրաման արձակելու՝ ռազմաճակատի գծին մոտ շրջաններից ոչ թուրք բնակչության տեղահանության մասին: Ասված էր՝ ո՛չ թուրք, սակայն, մյուս ազգային փոքրամասնություններին դա չէր վերաբերում: Որ դա այդպես էր, վկայում է եւ այն, որ տեղահանվեցին նաեւ Միջերկրականի ծովեզերքի՝ Կիլիկիայի հայերը, թեեւ այն կողմերում ռազմաճակատ չկար:

Այդ հրամանը արձակվեց 1915 թ. հունիսին, բայց մինչեւ այդ էլ սկսվել էին հայերի ձերբակալություններն ու աքսորը: Դեռեւս ապրիլ ամսվա լույս 24-ի գիշերը Կոստանդնուպոլիսի ոստիկանությունը նախապես կազմած ու ճշգրտած ցուցակներով ներխուժեց ամենաերեւելի հայ մտավորականների տները (Կոմիտաս, Սիամանյոն, Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Սեւակ, նաեւ՝ նշանավոր բժիշկներ, արվեստի գործիչներ, երաժիշտներ, իրավագետներ՝ թվով 245 հոգի):

Մեզ ծանոթ այս պատմությունները առավել մանրամասն ու փաստերով հագեցած, Յաիր Աուրոնը կրկին ներկայացնում է եւ՝ մեր, եւ՝ աշխարհի ուշադրությանը՝ մեկ անգամ եւս անառարկելիորեն վկայելով, որ հայոց Յեղասպանությունը կանխամտածված էր կառավարական մակարդակով (Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաներ եւ նրանց հյու-հնազանդ աստիճանավորներ վերեւից ներքեւ...):

«Քաղաքներից ու գյուղերից դուրս գալուց շատ չանցած, կարդում ենք այս գրքում, 15 տարեկան եւ ավագ տարիքի տղամարդկանց առանձնացնում էին, քշում մի կողմ ու գնդակահարում կամ էլ՝ սպանում այլ վայրագ միջոցներով: Իսկ 25-ից 40 տարեկան տղամարդիկ ավելի վաղ, իբր, զորակոչվել էին բանակ եւ նույն կերպ ոչնչացվել...»:

«Դժոխային ճանապարհներ անցնելուց հետո,- շարունակում է հետազոտողը,- այն կանայք եւ երեխաները, որոնք մի կերպ ողջ էին մնում, որպես ծառաներ (փաստորեն՝ ստրուկներ), շատերն էլ վաճառքի էին հանվում անա-

գատների շուկայում: Երեխաներին եւ կանանց բռնաբարում էին, մայրերին ստիպում էին ճանապարհներին թողնել մահացող երեխաներին: Շատ ընտանիքներ կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ»:

Եւ հեղինակը սրտացավորեն ավելացնում է, թե մինչեւ 1915թ. Թուրքիայում բնակվում էր երկուսուկես միլիոն հայ, որի մոտ կեսը զազանաբար ոչնչացվեց...

Ոչնչացվեց ոչ միայն տաղանդավոր ժողովուրդը, այլեւ՝ նրա ստեղծած նյութական մշակույթի հուշարձանները՝ վանք ու եկեղեցի, խաչքար ու այլ-եւայլ հիշատակներ...

Եւ հայ ժողովուրդը, որն իր բնօրրանում ապրել էր ավելի քան երեք հազարամյակ, վտարվեց այդ տարածքից:

Սակայն, Առաջին աշխարհամարտն ավարտվեց Գերմանիայի ու Թուրքիայի պարտությամբ եւ հույսեր արթնացան, թե մեծ տերությունները՝ հավատարիմ իրենց խոստմանը, կօգնեն հայությանը՝ ստեղծելու անկախ Հայաստան:

Բայց հանգամանքներն այնպես չղասավորվեցին, ինչպես որ պետք էր մեզ: Նախ՝ Ռուսաստանում պայթեց հեղափոխությունը, եւ բոլշևիկները գտան, որ իրենց այդ պահին ամենից ավելի խաղաղություն է պետք եւ ոչ թե պատերազմի հաղթական ավարտից հետո Օսմանյան կայսրության ասիական տարածքի հանդեպ (հայկական վեց վիլայեթներ) հավակնությունները:

Մինչ այս, մինչ այն, Կովկասում իրենց անկախ պետություններ հռչակեցին Վրաստանն ու Ադրբեյջանը, եւ ինքնաբերաբար իրեն անկախ հանրապետություն հռչակեց նաեւ թշնամիներով շրջապատված Հայաստանը:

Բայց, անկախ դրանից, ԱՄՆ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը ծրագիր մշակեց, ըստ որի Օսմանյան կայսրության՝ թուրքերով բնակեցված մասը պետք է մնար իրենց՝ թուրքերին, իսկ այլ ազգային խմբերին, ինչպիսիք էին հայերն ու քրդերը, պետք է հատկացվեին անկախ գոյության ու ինքնավար զարգացման անխախտելի պայմաններ: Սակայն, ԱՄՆ-ը հեռու էր, չէր կարող անմիջականորեն վերահսկել, եւ ուժ հավաքող թուրքական ազգային կառավարությունը՝ Մուստաֆա Զեմալի գլխավորությամբ, հակազդում էր Վիլսոնի ծրագրի իրագործմանը: 1920թ. սեպտեմբերին Զեմալը հարձակվեց նորաստեղծ ու դեռ թույլ Հայաստանի Հանրապետության վրա, նրա 60 հազար քառակուսի կիլոմետրից կտրեց 40 հազարը եւ, փաստորեն, վերջ տվեց անկախ Հայաստանին, որը հայտնվեց Խորհրդային Միության կազմում: Իսկ Օսմանյան բանակի սպա Զեմալը զավթեց իշխանությունը Թուրքիայում եւ 1923թ. հոկտեմբերին, հիմնելով Թուրքական Հանրապետությունը՝ Նոր Թուրքիան, իրեն հռչակեց Աթաթուրք՝ Թուրքիայի հայր:

ԽՍՀՄ կազմի մեջ մտած Հայկական Խորհրդային Հանրապետությունը

հազիվ 30 հազ քառակուսի կիլոմետր տարածք ուներ: Նույնիսկ Արարատ լեռը՝ Հայաստանի խորհրդանիշը, - ցավով գրում է Յաիր Աուրոնը,- մնաց Թուրքիային:

Հեռագոտողը, ինչպես ասել ենք արդեն, հետեւել է իրեն հետաքրքրող տարբեր ճյուղավորումների. մեկը առաջ մղելուց հետո, ժամանակային առումով ետ է դառնում՝ առաջ մղելու համար նաեւ այդ ճյուղը: Դրա վկայություններից է, ահա, եւ պատերազմից հետո ստեղծված թուրքական նոր կառավարության որոշումը՝ ստեղծել ռազմադատարան՝ դատելու Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաներին, կատարած հանցագործությունների համար: Եւ դատեցին՝ հիշյալ փաշաներին ու դոկտոր Նազըմին (որը ղեկավարել էր «Հատուկ կազմակերպությունն» ու ստեղծել չեթե ջոկատներ)՝ հեռակա կարգով դատապարտելով մահվան: Հեռակա կարգով, քանի որ նրանք հեռացել էին Թուրքիայից: Իսկ դատավճիռն ի կատար ածելուն ուղղված ոչ մի քայլ չձեռնարկվեց: Բայց դա չիսանգարեց՝ իրագործելու եւ՝ այդ դատարանի, եւ՝ մանավանդ՝ հայ վրիժառուների վճիռը: Հիշատակված ցեղասպաններից յուրաքանչյուրը մի երկրում գտավ իր սեւ վախճանը:

Թալեաթը՝ Թուրքիայի այն օրերի ամենակուլ ներքին գործերի նախարարը, գետին տապալվեց Բեռլինում, 1921թ. մարտի 15-ին, Սողոմոն Թեհլերյանի ձեռքով եւ, ի զարմանա շատերի, վճիռն իրագործողն արդարացվեց, քանզի անհերքելի փաստերով ապացուցվեց, որ թուրքական կառավարությունը հայերի ցեղասպանությունն իրագործել է ոչ թե ռազմաճակատային անհրաժեշտությամբ, այլ՝ հայությանը ոչնչացնելու նպատակով: Այլեւայլ փաստաթղթերի ու վկայությունների հետ մեկտեղ, դատարանում ներկայացվել են նաեւ Էնվեր փաշայի հրամանների պատճենները՝ զանգվածային սպանություններ սկսելու վերաբերյալ...

Բայց, արի ու տես, որ այսօր Թուրքիայում Թալեաթ փաշան համարվում է ազգային հերոս: Նրա աճյունը 1943թ. նացիստական Գերմանիայից տեղափոխվել է Թուրքիա եւ տեղադրվել Ստամբուլի դամբարանում:

Գրքի հեղինակը գրում է, որ բացառությամբ վերոնշյալ կարճատեւ շրջանի (հեռակա դատավճիռի), թուրքական կառավարությունը մշտապես ժխտել եւ շարունակում է ժխտել, որ հայերի զանգվածային ոչնչացումը եղել է գիտակցված քաղաքականության արդյունք:

Եւ ճանաչված հրեա գիտնականը, ի լուր բոլոր ցեղասպանագետների, խորապես համոզված, պնդում է. «**Կարելի է վիճել առանձին փաստերի, թվերի, հանգամանքների շուրջ, բայց Հայոց ցեղասպանության փաստը կատարելապես անվիճելի է: Այդ իմաստով՝ Հայոց ցեղասպանության ժխտումը հավասարազոր է Հոլոքոստի ժխտմանը**»(ընդգծումը՝ Ե. Պ.):

Բայց հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ այս մեծ Ցեղասպանությունը մի տեսակ ստվերվեց...

Նախ, որ՝ մագապործ հայությունը, սարսափից համրացած, ցրվեց աշխարհով մեկ եւ տրամադրություն եւ հնարավորություն չունեի հետապնդելու այդ հարցը, ապա՝ թուրքական քարոզչական մեքենան միլիարդներ էր ծախսում՝ հավատացնելու բոլորին, որ այն, ինչ եղել է պատերազմի ժամանակ, կրել է ինքնապաշտպանական բնույթ, պարզ տեղահանություն, որի ընթացքում, բնական է, կարող էին եւ մարդիկ մահանալ...

Եւ, այո, հայոց մեծ ողբերգությունը վերածվեց մի տեսակ «մոռացված ցեղասպանության»։ Հենց այդ նկատի ունեի մարդակեր Հիտլերը, երբ իր բարբարոս ջոկատներին Լեհաստան ճանապարհելիս լկտիաբար գոչում էր, թե՛ սպանեցեք, ջարդեցեք, ո՛վ է այսօր հիշում թուրքերի կողմից հայերի ոչնչացումը։ Եւ ինքն իրեն ոգեւորելով մարդկանց այդ «մոռացկոտությամբ»՝ կազմակերպեց հրեաների մեծ Հոլոքոստը, որն ավելի լայն արձագանք ունեցավ աշխարհում եւ անուղղակիորեն նպաստեց, որ Հայոց ցեղասպանությունը չդրոշմվի մարդկության հիշողության մեջ։

Բայց գուր էին եւ՝ Հիտլերի, եւ՝ Թուրքիայի իրարահաջորդ կառավարությունների հույսերը, թե մարդկությունը իսպառ կմոռանա այն անմարդկային սարսափների մասին, որ թուրք կառավարողները ժամանակին պատճառեցին հայությանը։

Եւ մոռացված ցեղասպանությունը 1960-70 թվականներին քիչ առ քիչ սթափվեց, կանգնեց մարդկության առջեւ՝ պահանջելով ճանաչել իրեն՝ հանուն նոր ցեղասպանությունների ճանապարհը փակելու։

Ու եթե, իսկապես, այդ ճանաչումը լինել մինչեւ Երկրորդ աշխարհամարտը, եթե Հայոց Ցեղասպանությունը չմոռացվեր, վստահորեն կարելի է ասել, որ ո՛չ Հիտլերը լկտիաբար կհոխորտար, ո՛չ էլ Հոլոքոստը կլիներ։

Այս արթնացմանը, անշուշտ, նպաստեցին աշխարհով մեկ ծավալված հայկական ահաբեկչական գործողությունները՝ ուղղված թուրքական դիվանագետների եւ հաստատությունների դեմ, որոնց նպատակն էր բորբոքել հասարակական կարծիքը եւ ստիպել գիտնականներին՝ առավել հիմնավոր ուսումնասիրել ողջ անցած-դարձածը եւ, վերջապես, առանց Թուրքիայի միջամտության, ազնվորեն իրերը կոչել իրենց անվամբ։ Եւ դա արդյունք տվեց։ 1984 թ. Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը հրապարակավ ընդունեց Հայոց Ցեղասպանության փաստը։ 1987 թ. Ստրասբուրգի Եւրախորհրդարանը որոշում կայացրեց, որ Թուրքիան չի մտնի ԵՏԽ այնքան ժամանակ, քանի դեռ չի ընդունել իր պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ իր նախորդների գործած անմարդկային հանցանքների համար։

Սակայն, ինչպես վկայում է հետազոտության հեղինակը, ԱՄՆ կոնգրեսը մինչ օրս չի ընդունել ապրիլի 24-ը Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակի օր հայտարարելու 1989 թ. առաջարկը։ Եւ չհաշտվելով ո՛չ դրա, ո՛չ էլ այլ կառավարությունների, այդ թվում եւ հրեական, զգուշավորության՝ Թուրքիա-

յին չնեղացնելու քաղաքականության հետ, Յաիր Աուրոնը եզրակացնում է. «Միջազգային հանրության կողմից, այդ թվում եւ Թուրքիայի (ավելի ճիշտ՝ առաջին հերթին Թուրքիայի) Հայոց Ցեղասպանության փաստի ընդունումը առաջնահերթ կարեւորություն ունեցող պատմական, բարոյական եւ դաստիարակչական անհրաժեշտություն է: Այդ ողբերգության գիտակցումը եւ հուշը նրա մասին կարեւորագույն, թեւեւ ոչ միակ պայմանն է, որպեսզի նման չարիք երբեւէ չկրկնվի»:

Այնուհետեւ գրքի հեղինակը մեջբերում է Հայոց Ցեղասպանության հրեա ականատեսների, հուշագիրների վկայություններ սարսափի այն օրերից: Նրանցից մեկը՝ Մորդեխայ Բեն Հիլել Հակոհենը գրառել է, թե Դամասկոսում տեսել է այնտեղ հասած ցնցոտիավոր կանանց ու երեխաների, որոնք փողոցներն էին մաքրում. նրանք սահմեկեցուցիչ պատմություններ են պատմել, թե ինչեր են կրել, թե ինչպես էին թուրքերը բռնաբարել հայ կանանց ու աղջիկներին, ինչպես էին ծնողներն իրենց երեխաներին ստրկության վաճառել մեկ մեջիդիեով, որպեսզի մյուսները սովից չմեռնեն...

Առաջին աշխարհամարտի ժամանակ իշուվի առաջնորդներից մեկը՝ Մեիր Դիզենհոֆը, հիշատակել է, թե Պաղեստին այցելելիս Էնվեր եւ Ջեմալ փաշաները սպառնացել են. «Զգուշացեք, սիոնիստներ, եթե դուք համարձակվեք դեմ գնալ մեր կամքին, մենք ձեզ հետ նույնը կանենք, ինչ արեցինք հայերի հետ»:

Եւ, որպեսզի իրենց ասածը համոզիչ դառնա, նրանք հրաման են տվել Թել Ավիվից հինգ հազար հրեաների արտաքսել Շարոնի եւ Գալիլեի գյուղատնտեսական բնակավայրերը:

Բայց շուտով հրեաներն այնպիսի աղմուկ են բարձրացրել աշխարհով մեկ (տարբեր երկրներում տպագրվող թերթերում ու համաժողովներում), դիմել են այլեւայլ կառավարությունների ղեկավարներին եւ հասել իրենց ուզածին: «Նիլ» հետախուզական կազմակերպության ղեկավարներից Արոն Արոնսոնը գրել է. «Մեր կողմից բարձրացված աղմուկը տվեց իր պտուղները: Գերմանիան ու Թուրքիան լավ յուրացրին, որ հրեաների դեմ բռնաճնշումները չեն մարսելու, ինչպես մարսեցին հայերի գլխին սարքած կոտորածը: Հրեաները կարող են ներագդել գերմանական պատերազմի ֆինանսավորման վրա: Այդ պատճառով էլ նրանք դադարեցրին տեղահանությունը»:

Ինչպես ասել ենք, այս մեծ հետազոտության մեջ շատ ու շատ հարցեր են բարձրացվում, որոնք թեւեւ մի կողմից դժվարացնում են շարադրանքի ընթացքը, բայց եւ՝ ամբողջացնում են ասելիքը եւ շարժումը դարձնում ավելի արդյունավետ:

Նման հարցերից է քաղաքական սիոնիզմի հիմնադիր եւ հրեական ժամանակակից պետության «մարգարեի» տիտղոսի արժանացած Թեոդոր Հերցլի եւ գրող Բեռնար Լազարի բարեկամության, ապա եւ այդ բարեկամության

խզման հետ կապված պատմությունը, որ առնչվում է ինչպես Հայկական հարցին, այնպես էլ Աբդուլ Համիդի հանդեպ նրանց ունեցած տարբեր դիրքորոշումներին ու վերաբերմունքին: Յաիր Աուրոնի համակրանքը Բեռնար Լազարի կողմն է, եւ ոչ Հերցլի, որ նպատակին հասնելու համար չի խորշում ոչ մի միջոցից:

Կարետոր տեղ է հատկացված ժամանակին (1909թ.) Երուսաղեմում, «Հացվի» թերթում լույս տեսած «Մենք» անստորագիր խմբագրականին, որի հեղինակը խմբագիր Խուսամար Բեն Ավին էր: Ասվում է, որ մինչ այդ «Հացվին» մի քանի անգամ անդրադարձել էր հայերի նկատմամբ իրագործված գազանային հաշվեհարդարներին, խորին անհանգստություն է արտահայտում այդ առթիվ եւ ցավակցություն՝ հայերին:

Իսկ «Մենք» խմբագրականում Բեն Ավին իր զայրույթն ուղղում է իր հայրենակիցների դեմ՝ նրանց անտարբերության, ուրիշների վշտի հանդեպ անկարեկից մնալու, իրենց պատյաններից դուրս չգալու սովորության համար, քանի դեռ հարցը չի վերաբերում անձամբ իրենց կամ իրենց ազգին: Ամենից ավելի նրան զայրացնում է այն, որ հրեաները մի տեսակ սեփականացրել են «տառապանքի մենաշնորհը»՝ չցանկանալով ընդունել, որ «աշխարհում կան նաեւ ուրիշ ժողովուրդներ, որոնց բաժին են ընկել ոչ պակաս տառապանքներ»:

Հոդվածն, իհնչ խոսք, հախումն հարձակումների դուռ է բացել դեպի թերթն ու նրա երիտասարդ խմբագիրը: Եւ անթիվ, անհամար բողոքներ ու հրապարակումներ են լինում՝ իրենց հասցեին ասված մեղադրանքներին ի պատասխան: Գրում են, թե իրենք միայն իրենց մասին մտածողներ չեն, թե հայերն էլ շատ դեպքերում իրենց չեն հիշել եւ այլն... եւ այլն... Եւ որ «Մենք»-ի խմբագիրն իրենց խորթ մարդ է ու դավաճան...

Վերջում հանդես է եկել նաեւ գրող, լրագրող Յակով Ռաբինովիչը, «Հեղ Հացման» թերթում: Նա հավասարակշռված մոտեցում է հանդես բերում եւ ցույց է տալիս, որ եւ՝ «Մենք»-ի հեղինակի դատողություններում, եւ՝ նրան քննադատողների ելույթներում կա ճշմարտություն, եւ որ երկու կողմն էլ սրտացավ հրեաներ են եւ ոչ դավաճան: Այն ժամանակ, երբ Օդեսայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում հրեաների ջարդեր էին լինում, ասում է նա, տասնյակներով հրեաներին պաշտպանելու են ելել հայ ուսանողներ՝ չլախե՛նալով հանուն մեզ վտանգել իրենց կյանքը: Դա չի կարելի մոռանալ: Բայց չեմ կարող մոռանալ եւ այն, որ թուրքերի կողմից հայերի կոտորածի օրերին մեզանում կարեկցանքի ու սրտացավության ոչ մի ակնարկ, ոչ մի շողք չկար մի ժողովրդի հանդեպ, որի ճակատագիրն այնքան մոտ է մեր սեփականին»:

Մթափեցնող խոսքեր են, որ դժվարին իրավիճակներում անգամ մղում են չկորցնել մարդկայնությունը եւ կարողանալ մտնել նաեւ այլոց դրության մեջ:

Գրքի հեղինակը, շարունակելով այդ թեման, վերհիշել է տալիս նաեւ հա-

յերի կոտորածները 1895-96 թ.թ. եւ բերում է վկայություններ, թե Հիզկիա թաղամասի առանձին հրեական տարրեր, որոնք համաձայնության ու համագործակցության էին ձգտում թուրքական իշխանությունների հետ՝ ձգտելով չառաջացնել նրանց զայրույթն ու դժգոհությունը իրենց հանդեպ, ամոթալի դեր են կատարել, «որը չի կարելի արդարացնել»՝ օգնելով քրդերին, գտնելու թաքնված հայերին:

Դա, - ասում է հեղինակը, - առաջ է բերել եւ հրեական համայնքի խորին զայրույթը:

Ապա անցում կատարելով «Նիլի» խմբին՝ Աուրոնը շեշտում է, որ այդ խմբի անդամների մեծ մասը կարեկից էր հայ ժողովրդի ողբերգությանը: Հիշատակվում է օրինակ, Ավշալոմ Ֆայնբերգը, որ, ցավոք, շատ կարճ է ապրել: Կարեկցանքով խոսելով հայոց կոտորածների մասին՝ նա գրել է. «Իրենցից հետո այրված հող թողնելու թուրքերի կարողություններն անսահման են: Նրանք պարզապես ժանտախտ են, եւ մենք պիտի հիշենք՝ ինչ ասես հնարավոր է, ի՛նչ ասես...»: Մեկ այլ առիթով նա գրել է. «Մի՞թե Երեմիան արյուն-արցունք չէր թափի նաեւ հայերի համար»:

Ավշալոմի նման կարեկից մարդը չէր կարող չնկատել ու չգնահատել ողբերգական այդ օրերին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին ու նրա գործունեությունը:

«Կարելի է մտածել, - գրում է նա, - աստվածային նախախնամությունը որոշեց մեզ օգնություն ցույց տալ՝ այդ մարդուն ուղարկելով այդ պաշտոնին մի այսպիսի պահի... Կարելի է վստահաբար ասել, որ այդ մարդը պատմության մեջ մտավ շքամուտքից՝ հայերի առջեւ իր ծառայությունների միջոցով»:

Մեջբերելով այս եւ համանման շատ այլ գովեստի խոսքեր այդ արժանավոր մարդու հասցեին՝ գրքի հեղինակը միաժամանակ հարկ է համարում հիշեցնել, որ նա, ով միշտ օգնություն է ցուցաբերել հայերին, զարմանալիորեն չի աշակցել նրանց անկախության ձգտմանը:

Համակրանքով է ներկայացվել նաեւ Արոն Արոնսոնի կրտսեր եղբայր Ալեքսանդր Արոնսոնը, որ շատ մտերիմ էր ինչպես իր եղբոր, այնպես էլ Ավշալոմ Ֆայնբերգի հետ: Նա հեղինակել է «Հայաստան» վերնագրով մի պամֆլետ, որի մեջ ասում է. «Հայեր, եղբայրներ իմ, ձեզ դիմում է հրեան, որդին այն ժողովրդի, որ տեսել է հետապնդումներ, հալածանքներ, անարդարություն, ինչպես եւ ձեր ժողովուրդը: Դուք տառապում եք, որովհետեւ չիրաժարվեցիք այն հավատից, որ Քրիստոսն էր նվիրել քրիստոնյաներին, մենք տառապում ենք, որովհետեւ Հիսուս ենք նվիրել այն ժողովուրդներին, որոնք իրենց կոչում են քրիստոնյաներ: Միավորենք մեր ջանքերը... եւ այլն»:

Ներկայացվում է նաեւ Արոնսոնների քույրը՝ Սառան, որ գնացքով ճամփորդելիս իր աչքերով է տեսել երկաթուղու երկու կողմերում նետված բազ-

մաթիվ հայերի անթաղ դիակներ, որ հռչակում էին թափառական շները: Եւ նա հոգեկան ցնցում է ստացել, որ ուղեկցել է նրան իր կարճատեւ կյանքում, մինչեւ ինքնասպանությունը:

Իսկ ինչ վերաբերում է մեծին՝ Արոն Արոնսոնին, նա միշտ էլ հետեւողականորեն իր կարեկցանքն ու համակրանքն է արտահայտել հայերի նկատմամբ: Եւ, կարծես ամփոփելով իր դիտարկումներն ու տպավորություններն այդ կապակցությամբ, մի տեղ նա ընդգծել է. «Հայերի ոչնչացումը թուրքերի եւ գերմանացիների մանրագնին ծրագրված դեմարշն է, եւ նրանք հավիտյանս համատեղ պատասխանատվություն են կրում այդ հանցագործության համար»:

Այս ամենը նկատի առնելով՝ գրքի հեղինակն իր հերթին իրավացիորեն եզրակացնում է, թե «հայերի ոչնչացման հանդեպ «Նիլի» խմբի անդամների վերաբերմունքն իր մեջ խոր բարոյական արմատներ ունի՝ համամարդկային, հրեական եւ սիոնիստական»:

Քանի որ խոսք եղավ հայերի տառապանքների նկատմամբ մեծ հոգիների, սրտացավ մարդկանց կարեկցանքի, համակրանքի եւ իրենց հնարավորությունների սահմաններում նրանց ինչ-որ կերպ, թեկուզեւ բարոյական օգնություն ցուցաբերելու մասին, անհնարին է չհիշատակել նաեւ գերմանացի բողոքական քահանա Յոհաննես Լեփսիուսին, որ հայերին օգնել էր դեռեւս 1896 թվականի կոտորածի ժամանակ եւ ամեն ինչ անում էր նաեւ 1915-16թթ.՝ կազմակերպելով Գերմանիայի եւ ԱՄՆ-ի հասարակությանը՝ աջակցելու հայերին:

«Հայերը թանկ են ինձ համար,- գրել է նա,- եթե ողջ խստությամբ քննեմ սիրտս, նա կպատասխանի, որ հայերը, որքան էլ դա մեղսավոր եւ հակաբնական հնչի, ավելի թանկ են ինձ, թերեւս, քան իմ սեփական ժողովուրդը»:

Արտասովոր այս մարդու մասին հիացմունքով գրել է Ֆրանց Վերֆելն իր հանրահայտ վեպում՝ նրան համարելով Աստծո կողմից ուղարկված՝ հայ ժողովրդի պահապան հրեշտակ:

Մի հարցում միայն Լեփսիուսի մոտեցումը տարբեր է այլոց մոտեցումներից: Նա գտնում է, որ հայերի ոչնչացումը իրագործվել է միայն թուրքական գազանաբարո կառավարության նախապատրաստած ծրագրով, եւ այդ հարցում նաեւ Գերմանիային մասնակից դարձնելն ու մեղադրելը չարամիտ բամբասանք է: Եւ որ բոլոր գերմանացիներն էլ կարեկցում են հայերին...

Հակադրվելով նրան՝ այս հետազոտության հեղինակը գրում է, որ, այո, ծառայության պարտքով զանգվածային ջարդերի գոտի ընկած գերմանացիները տեսնում էին կատարվող սարսափները, վրդովմունք էին զգում, բայց ոչինչ չէին ձեռնարկում արյունահեղության դեմն առնելու համար: Բարոյականության տեսանկյունից դա էլ մասնակցություն է, թեկուզեւ՝ միջնորդավորված:

Բայց, իհարկե, հեշտ է ասել՝ արյունահեղության դեմն առնել: Ուրիշ բան, եթե դա վերաբերում է գերմանական կառավարությանը, թե չէ՝ մի ազնիվ անհատը, ինչպիսին էր, ասենք, գերմանացի գինավորական բժիշկ Արմին Վեգները, որ նույնպես շատ բանով օգնել է հայերին, ուրիշ ի՞նչ կարող էր անել...

Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված եւրոպական տերություններում հայոց ազգային պատվիրակության գործունեությանը, մասնավորապես՝ նրա ղեկավարի՝ Նուբար փաշայի եւ Զեյնա Հարություն Մալկոմի անխոնջ աշխատանքին, որ նպատակաուղղված էր այդ տերությունների հովանավորությամբ անկախ Հայաստանի կայացմանը՝ պատմական իր բնօրրանում կամ Կիլիկիայում, ուր կենտրոնացել էին հայ փախստականների ամենամեծ խմբերը:

Պահպանվել են սիոնիստների առաջնորդներից մեկի՝ Սոկոլովի բնութագրումները հայ պատվիրակների, որոնց նախապես չէին վստահում, բայց քիչ առ քիչ տեսան ու գնահատեցին նրանց արժանիքները:

Մալկոմի մասին ասված է. «Նա գործնական մարդ է՝ լայն տեսադաշտով, Հայաստանի հայրենասերն է, որն ունակ է հասկանալու նաեւ սիոնիստների եւ բոլոր հրեաների դառնությունները»:

Մալկոմը Պարսկաստանում հաստատված հայտնի հայ ընտանիքի ժառանգ էր, որ կրթություն էր ստացել Անգլիայում, Օքսֆորդի համալսարանում, ընդունել էր բրիտանական հպատակություն եւ սկսել էր աշխատել լոնդոնյան սիթիում:

Իսկ Նուբար փաշայի մասին Սոկոլովն ասում է. «Իմաստուն մարդ է: Կարեկցող, մեծապես հարգված եւ գնահատված է... Վստահություն է վայելում Եգիպտոսում, իսկ այստեղ (Եւրոպա) պարզապես ամենացանկալի անձ է»:

Հայկական ազգային պատվիրակությունն ստեղծվել էր 1912թ. հայոց Կաթողիկոսի հովանու ներքո: Նրա շտաբ-բնակարանը Փարիզում էր:

Տեղեկացնելով այդ ամենի մասին՝ Յաիր Աուրոնը շարունակում է. «Բայց ժամանակն անցնում էր, եւ ակնհայտ էր դառնում, որ հայերի վիճակն ավելի ու ավելի է ծանրանում. Ֆրանսիան, Անգլիան, ԱՄՆ-ը, յուրաքանչյուրն իր պատճառներով, դադարեցին պաշտպանել հայերի իրավունքները: Հաղթող երկրները չկատարեցին իրենց խոստումները»:

Այսպիսով, աննկարագրելի կորուստներից ու տառապանքներից հետո հայերի հույսերն ի դերեւ ելան: Բայց ճակատագիրը երբեմն մեզ շնորհում էր եւ մխիթարանքներ, որոնք օգնում էին չհանձնվելու, կուլ չգնալու, հավատարիմ մնալու մեր ինքնությանն ու էությանը... Նման մխիթարանքներից էր Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, որ մեր ժողովրդին նոր շունչ էւ ուժ ներարկելու տեսակետից հազարապատիկ ավելին արեց, քան մեծ տերությունները՝ միասին վերցրած:

Ֆրանց Վերֆելը ծնվել է 1890 թվականին, Պրահայում, հրեայի ընտանի-

քում: Մինչ աշխարհահռչակ այս վեպը հեղինակելը, նա հայտնի է եղել բանաստեղծություններով ու պիեսներով: Գրել է գերմաներեն: «Մուսա լեռան 40 օրը» տպագրվել է 1933թ. Հիտլերի իշխանության գալուց հետո, եւ այն այլ գլուխգործոցների նման հրկիզվել է նացիստների կողմից:

Մեկ տարի անց վեպը եբրայերեն է թարգմանվել եւ, ինչպես վկայում են ժամանանակիցները, այն ահռելի ազդեցություն է գործել Էրեց Իսրայելի երիտասարդության վրա: Եւ ինչո՞ւ միայն նրանց... Բայց հրեաների շրջանում, իսկապես որ, վեպն առավել ջերմ ընդունելություն գտավ, քանի որ նրանք առանձնակի ընդգծում էին հեղինակի ազգային պատկանելությունը եւ նշում, որ այդպիսի ստեղծագործություն, մարդկանց տառապանքն զգալու եւ համոզիչ կերպով նկարագրելու կարողություն, ըստ իրենց, կարող էր դրսևորել միայն հրեան:

Եւ նրանց միջավայրում սկսվում են վեպի փառաբանություններ, բանավեճեր, նաեւ՝ դժգոհություններ այն առնչությամբ, թե ինչո՞ւ է հրեան գրել ոչ թե կոնկրետ իրենց, այլ՝ ուրիշ ժողովրդի ցավի ու ճակատագրի մասին եւ բանաստեղծական հրաշք հուշարձան է կանգնեցրել ոչ թե իրենց, այլ՝ հայերի տանջանքներին ու տառապանքներին: Նախանձել են, դժգոհել, բողոքել, սակայն, ինչպես գրել է բանվորական շարժման ականավոր առաջնորդներից մեկը՝ Մոշե Բեյլինսոնը, «ընթերցելու ընթացքում այդ զգացումներն անհետանում են, քանզի դա հոյակապ եւ ուժեղ գիրք է, գիրք բազմաթիվ սերունդների համար, որի առջեւ կնահանջի ամեն մի նվաստ զգացում»: Եւ ավելացնում է, որ վեպը թեւեւ հայերի տառապանքներին ու պայքարին է նվիրված, բայց հեղինակը խոսում է հրեաների ճակատագրի մասին: Ապա, նկարագրելով, որ «Մուսա լեռան 40 օրը» ձեռքից ձեռք էր անցնում եւ կարեկցանք ու համակրանք արթնացնում մարդկանց սրտերում հայերի հանդեպ, հետազոտողը մեզ բերում-հասցնում է մինչեւ Բ. աշխարհամարտը, երբ գերմանական նացիստների կողմից ահավոր ցեղասպանության (Հոլոքոստի) է ենթարկվում հրեա ժողովուրդը: Եւ հազարավոր հրեա ողբասացներին է միանում նաեւ գրող Իցհակ Կացենելսոնը՝ գրելով «Վիտալ ճամբարի օրագիրը» գիրքը, որի մեջ կան այսպիսի տողեր. «Երբ սպանում էին հայերին, նրանց ողբաց, նրանց վրա հուշարձան կանգնեցրեց հրեա գրողը, հիմա սպանում են հրեաներին եւ ո՞վ կողբա մեզ վրա, ո՞վ կվշտանա մեզ համար, մարգարեների զավակների համար...»:

Բայց հրեաների մեծ ողբերգությունը, նրանց Հոլոքոստը, իհարկե, անհայտ ու անողբացող չմնաց, ի տարբերություն հայերի Ցեղասպանության, այն շատ ու շատ լայն արձագանք գտավ եւ միլիոնավոր մարդիկ կարեկցեցին նրանց եւ դատապարտեցին նացիստ մարդասպաններին:

Կարելի է ասել՝ հրեական Հոլոքոստի հայտնիության ֆոնին կարծես էլ ավելի մոռացության ու լռության մատնվեց հայերի Ցեղասպանությունը ինչ-

պես ողջ աշխարհում, այնպես էլ՝ հրեական միջավայրում: Այդ մասին ասել ենք արդեն, սակայն, գրքի հեղինակը, կրկին անդրադառնալով այդ խնդրին, փորձում է բացատրություն գտնել, թե, ասենք, հրեաների միջավայրում ո՞րն էր հայկական ողբերգությունը լռության մատնելու պատճառը: «Հնարավոր է,- գրում է նա,- լիակատար կենտրոնացումն էր միայն իրենց վրա, վախը Պաղեստինում կատարվող իրադարձությունների համար... Չի կարելի մոռանալ եւ այն, որ շատերը... թուրքական կողմնորոշում էին պահպանում եւ երիտթուրքերի հեղափոխությունից հետո այդ տրամադրություններն ավելի ուժեղացան. հույս հայտնվեց Օսմանյան կայսրության ներսում ստանալ ազգային տարածքային ինքնավարություն: Ոմանք էլ,- շարունակում է հեղինակը,- վախենում էին, թե թուրքերն իրենց իշուվի նկատմամբ կկրկնեն այն, ինչ արդեն արել էին հայերի հետ. թե հրեաների ոչնչացմանը կմիանան նաեւ արաբները, ինչպես որ քրդերն էին միացել թուրքերին՝ հայերի ոչնչացման ժամանակ»:

Բայց եթե անառարկելիորեն ընդունենք էլ Յաիր Աուրոնի պատճառաբանություններն ու հրեության արդարացման փորձերը նախորդ տասնամյակների վերաբերյալ, անհասկանալի կմնա եւ այն, թե Բ. աշխարհամարտից երեք տարի անց կազմավորված Իսրայել պետությունն ինչո՞ւ է հետեւողականորեն հրաժարվում ճանաչել հայերի Յեղասպանությունը: 1978 թ. Իսրայելում ցուցադրությունից հանվեց Երուսաղեմի հայկական թաղամասի մասին պատմող ֆիլմը: 1982 թ. իսրայելական կառավարությունը միջամտեց Հոլոքոստին եւ Յեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովի անցկացման ծրագրերին: 1989 թ. Իսրայելի կառավարությունը անուղղակի կերպով նպաստեց, որ ԱՄՆ Կոնգրեսը հրաժարվի Հայոց Յեղասպանության հիշատակի օրը մտցնել պաշտոնական օրացույց: 1990 թ. Իսրայելում արգելվեց «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ամերիկյան հեռուստատեսային փաստավավերագրական ֆիլմի ցուցադրումը:

Հիշատակվում են եւ այլ նման օրինակներ, որոնք չեն իրագործվում, քանի որ մեծ ջանքեր են գործադրում թուրքական իշխանությունները, Թուրքիայում ապրող հրեաները, Իսրայելում թուրք ներգաղթյալների հայրենակցական միությունը, Իսրայելի արտաքին գործերի նախարարությունը...

Այս ամենը քիչ է կարծես, նշվում է եւս մի պատճառ. Իսրայելի վերաբերմունքը իրենց Հոլոքոստի եւ այլոց ցեղասպանությունների հանդեպ:

Այդ կապակցությամբ «Հաարեց» հեղինակավոր թերթում իր զայրույթն է արտահայտել ճանաչված եւս մի անձ՝ Ամոս Էլոնը՝ նախատինքի սլաքներն ուղղելով իսրայելական պաշտոնական բյուրոկրատիայի դրսևորած երկերեսանության, անսկզբունքայնության եւ բարոյական վախկոտության վրա, որն անդադար ողջ աշխարհին հիշեցնում է իրենց Հոլոքոստի մասին, իսկ այլ ժողովուրդների նկատմամբ իրագործված հոլոքոստը համարում է ընդամենը քաղաքական շահարկման առարկա:

Տեղին է Անոս Էլոնի զայրույթը. Խորայելի բյուրոկրատիան միշտ էլ համարել է, որ իրենց Հոլոքոստն ուրիշ է, առանձնահատուկ է եւ եթե իրենք ուրիշ ժողովուրդների ողբերգությունների մասին խոսեն, դրանով կնսեմացնեն իրենց անհամեմատելի Հոլոքոստը:

«Դժբախտաբար,- գրում է «Անընդունելի անտարբերություն» գրքի հեղինակը,- իսրայելյան հասարակության մեջ դեռ շատ են այն մարդիկ, որոնք գերադասում են չիմանալ հայերի, գնչուների եւ ուրիշների ցեղասպանությունների մասին: Եւ իսկապես՝ շատերն այդ մասին չգիտեն: Այնինչ,- ասում է նա,- մենք պետք է մեր Հոլոքոստի առանձնահատկությունն ընդգծենք՝ միայն համեմատելով այն ուրիշ ժողովուրդների զանգվածային ոչնչացման գործողությունների հետ... Մենք չպետք է ձեւացնենք, թե ուրիշ ժողովուրդների ցեղասպանությունն պարզապես չի եղել: Մասնավորապես, - շեշտում է Յաիր Աուրոնը,- չպետք է մոռանալ Հայոց Ցեղասպանությունը, որոնց զոհացուցակն այնքան նման է հրեականին: Եւ, ինչպես գրում է «Հաարեց» թերթը, «Մեր սեփական Հոլոքոստի մասին հիշողությունը ստիպում է մեզ՝ կարեկցանքով վերաբերվել հայ ժողովրդի տառապանքին եւ արգելքներ չհարուցել ԱՄՆ-ի առջեւ՝ օրինականացնելու այդ տառապանքների հիշատակի օրը»:

Եւ ամփոփելով ողջ ասվածը հրեա ժամանակակից խորագիտակ պատմաբանի «Անընդունելի անտարբերություն» գրքի մասին եւ նրա հայերեն թարգմանության ու հրատարակման առիթով՝ կարծում ենք, որ այն իր մեծ նպաստը կբերի հայ եւ հրեա ժողովուրդների փոխադարձ ճանաչողությանն ու մերձեցմանը եւ կօգնի ավելի անմիջականորեն համագալու միմյանց, որպես փորձությունների ու տառապանքի անօրինակ դժվարին ճանապարհներ անցած, բայցեւ հույսն ու հավատը մշտապես վառ պահած ու անվարան դեպի գալիք ընթացող երկու ներհուն ժողովուրդներ:

ԵՐՎԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ